

# ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Երրորդ տարին օղջորող կուլտուրական սոսկալի քայլումների պատճառ համաշխարհային պատերազմը հայ ժողովրդի կեանքում ամենից աւելի աւերածութիւններ առաջ քերեց ու դեռ շարունակւում է, մեր առանց այն էլ, աւերակներով հարուստ հայրենիքում փլատակների, հայրենի աննման կերտուածքների հիմնահատակ կործանումների թիւն աւելանալ:

Սակայն ինչպէս ամենուր, այնպէս եւ մնանում լաւ ապագայի յոյսերը շատ է խոր ու կենդանի, որ աւերման առաջ շւարենիք ու ծեռքերը ծալենք: Ամեն տեղ փլատակները մաքսելու, նոր կեանքի համար օրն ի ըուն աշխատելու գործն է կատարում եւ մեր պարտականութիւնն է այդ աշխատանքում ետ շմալ կործանուածը նորից աւելի շքեղ վերականգնելու, նոր կերտուածքները հարստացնելու ողեւորից աշխատ նրը եռանդոն առաջ տանել:

Հայ ժողովրդի տառապանքի ու անլոր վշտի սրբազն խորան, հայ եկեղեցին եւս անմասն չի մնացել ընդհանուր աւերածութիւններից: Որքան սրբազն տաճարներ, հայրենի իրայատուկ մշ ուկոյթի սիրուն արդիւնք կոթողներ արեւելքի բարբարուների ձեռքով քարուքանդ են եղել, կորել, փշացել:

Հայ մորի ծնունդ, զգացմունքի զնողում ծեռագրներ, իաշարժաններ արծանագրութիւններ կոտրտւել, հողին են հաւասարուել կամ իրացւել, յափշտակւել են:

Աւերտած երկորի վերակենդանութեան, վերաշնութեան մէջ անփոխարինելի դեր ունի ազգային հայ եկեղեցին եւ նրա պաշտօնէութեան վրայ կայ ծանր պարտականութիւն այժմենից իսկ պատրաստուել ապագայ մեծ գործի համար:

Հայ հոգեւորականութիւնը ինքն էլ խոստովանում է, որ իւր դեռը ամենայն սրբութեամբ, անկեղծութեամբ չի

կարողանում կատարել եւ նա միայն չէ իւր թերութեամբ. նրան կողք կողքի աշխատող հասարակութեան զանազան խաւերն եւս այդ խոստովանում են:

Մակայն խոստովանել յանցանքը պատասխանառութիւնից ազատել չի նշանակում: Կենդանի գործ է հարկաւոր, շօշափելի արդիւք, որ քանդուածը շինուի, վլատակը վերականգնուի, հայ եկեղեցին, ժողովրդի միխիթարանի, աղօթքի, յուսոյ ու հաւատի տաճարը շնանայ, պայծառանայ ու ուկեղեցին Ե. ղարու աննման աշխատանքը ցոյց տայ հայ ժողովրդի առաջադիմութեան գործում:

Մայր Աթոռի ու հայ եկեղեցու միակ պաշտօնական «Արարատ» ամսագիրը իւր ղերն ունի այդ աշխատանքի մէջ, իւր պարտքն ունի այդ ընդհանուր մեծ գործում:

Հայ եկեղեցու բարգաւաճման համար անհրաժեշտ է հայ հոգեւորականութեան քարելաւումը, մի քան, որի մասին տարիներ շարունակ գրում է, որի անհրաժեշտութիւնը շեշտում են ամենքը եւ ամենուր:

Այդ օրուայ պահանջ աշխատանքին ընդառաջ զնալու համար ամենից անհրաժեշտ է, որ հայ հոգեւորականութեան եւ հայ եկեղեցու մեր ժողովրդի յառաջադիմութեան խընդում անհրաժեշտ է ղեր ունենալու անկեղծ գիտակցութիւնն ունեցողները հրապարակ գոն մուածուած, ներկայ որութիւնը լաւ կշռադրուած աշխատանքներով, ցոյց տան հայ հոգեւորականութեան քարձրացման անհրաժեշտ ղարձան պահանջները, արծարծեն հարցեր, քննութեան առնեն խընդուները լրջօրէն համոզուած լինելով, որ հնարաւորը կարւի:

Ամենից առաջ պէտք է խնդիրները մանրամասն լուսաբանել պարզ ու կշռադրուած փաստեր բերել, ցոյց տալ եղած պակասութիւնները, լուսաբանել պատճառները որից առաջ է եկել ներկայ հայ եկեղեցու անմիխիթար որութիւնը:

Գաւառների, թէ քաղաքների, մայր երկրի, թէ զառութների հայ հոգեւորականների ու հայ եկեղեցու նախանձախնդիր անժանց առաջ «Արարատ»ը քացում է իւր էջերը հայ եկեղեցու բարգաւաճման, հայ հոգեւորակութեան քար-

ճրացման վերաբերող անկաշառ ու լուրջ ուսումնասիրուած յօդուածների համար:

Կենդրոնից հնարաւոր չէ հազարաւոր վերստեր հեռու ընկած հայ ժողովրդի, եկեղեցու, հոգեւորականի անհրաժեշտ պահանջները տեսնել ու հրապարակ հանել. Կենդրոնի հետ կենդանի յարաբերութիւն պէտք է պահեն ծայրերը իրենց դրութիւններով. աշխատանքներով: Ժայրերի իրենց իսկ օգուի տեսակէտից այդ կենդանի կապը անհրաժեշտ է:

Եւ «Արարատ»ը այդ կենդանի կապ, այդ սերու միութեան կոչն է անում կրկին ու կրկին հայ հոգեւորականութեան ու հայ եկեղեցու ջատազովներին. յանուն հայ ժողովրդի ապագայ վերակենդանութեան հայրենիքի վերաշնուրութեան պարբերաբեր տեղեկազրեր, ուսումնասիրութիւններ, եղած պակասութիւնների, ցաւերի լուրջ դիտողութիւններ ուղարկել խմբագրութեանը, ամեն մի անկեղծ, սրտացաւ ու լուրջ աշխատանքի այդ ուղղութեամբ սիրով տեղ կտրուի արմագրում:

Տառապանքի, աւերի դէմ միայն մի սպեղանի կայ՝ այդ անդսորում ու անվերջ աշխատանքն է: Այդ շինարար աշխատանքի դրուն է բանում «Արարատ»ը 1917 թուին, իսոր յոյս ունենալով, որ հայ հոգեւորականութիւնը անուշադիր չի լինի այս առաջարկին, հաւատացած լինելով. որ մեծ ճիւստակի օրհնասական օրերին հայ ժողովրդի վերածնութեան և սխանական սխնդիրները անկեղծ աշտկից կլինեն մեր աշխատանքին:

Զոյդ ընդ դմին «Ռոստառ»ը իւր գոյութեան սկզբից ունեցել է իւր Ա. Թեջ՝ Առօնական-քարոյական-ազգային քաժուին կից եւ Բ. հայսկիուական բաժինը, ուր հայ պատմութեան, բանասիրութեան, գրականութեան, երաժշտութեան, հայ կեանքի այլ կողմերին վերաբերող ուսումնասիրութիւններ, հում նիւթեր է զետեղել: Շերթեցէ՛ք «Արարատ»-ի այդ բաժուի էջերը եւ կտեսնէք, որ շատ ականաւոր գրողներ աշխատակցել են իրենց լուրջ ուսումնասիրութիւններով:

Հայ կեանքի ուսումնասիրութիւնները այժմ քան երբէք

մեզ համար պահանջ է դարձել։ Ուրախութեամբ տեսնում ենք, որ ամեն տեղ հայ անցեալի վերաբերմամբ կենդանի հետաքրքրութիւն է առաջ եկել։ Դասախոսութիւններ, ուսումնասիրութիւններ են լինում։ Թէ մեզանում, թէ օտարների մէջ։ Այդ կենդանի հետաքրքրութեան շնորհիւ է, որ մեր կեանքի շատ ու շատ, ցայսօր անծանօթ մսացած, կողմարը երեւան պիտի գան եւ մեզ ու օտարներին վկայեն, որ հայ ժողովաւրդը դարերի տառապանքները տաքել է ու կուչի զնացել պատմական սոսկալի հեղեղներին շնորհիւ իւր ինքնուրոյն կուլտուրական ստեղծագործութիւնների, շնորհիւ իւր հոգեկան աշխարհով ապրելուն, հոգու արտաքրութիւններ ունենալուն։

Հայագիտական, այս բառի լայն իմաստով, ուսումնասիրութիւնների համար Կովկասում միակ ամսագիրն այժմ «Արարատ»ն է։

Անշուշտ շատ ցանկալի է, որ այլ ամսագրեր եւս լինին, որ մեր իրականութեան մէջ առաջ գան նոր պարութականներ եւ հարաւորութիւն տան հայ կեանքի ուսումնասիրութիւններով պարապողներին իրենց աշխատանքները հրապարակ հանել, հայ զիտութիւնը ծոխացնել։

«Արարատ»-ը ի սրտէ ողջունում է «Գործ» ասմագրի առաջ գալը սակայն առայժմ մենակ իւր վրայ է ծանրացած տեսնում հայագիտական աշխատանքներին ուսումնասիրութիւններին տեղ տալը։ Համոզուած լինելով, որ սյու ուսումնասիրութիւնները աւելի եւս հետաքրքրութիւն առաջ կը երեն մեր մէջ, աշխատողների թիւը կաւելանայ եւ հասարակութիւնը պահանջը խորն զգալով նոր ամսագրերի հիմք կդնէ։

«Արարատ»-ը ինորում է հայ բանասէրներին, զրականութեամբ, պատմութեամբ պարապողներին յանուն հայ կեանքի յառաջադիմութեան աշխատասիրել, ուղարկել ուսումնասիրութիւնները անշուշտ որոշ վարձատրութեամբ եւ ոչ ճրի, եւ նպաստել մեր կեանքի վերաշնորհեսնը։

Մինչ օտարներն են մեր կեանքն ուսումնասիրում, անզամ մեզ ծանօթացնում մեր ունեցածի հետ, մենք մսում ենք մի կողմում հանդիսատեսի դերում կանգնած։ Ծշմա-

քիտ որ մարդու արժանապատութիւնը վիրաւորւում է տես-  
նելով այդ որութիւնը։ ԶԵ որ ազգային կեանքի բուռն հե-  
տաքրքրութեան այս ուշազուաւ ժամին մեր դիրքը հանդի-  
սատեսի չի լինելու, այլ աշխատողի, գործող անծի։

Անշուշտ նիւթականի խնոխը կայ կապուած այս Հարցի  
հետ եւ մեր միջոցները առայժմ մեծ ձեռնարկութեան հնա-  
րաւորութիւն շնու տալիս։ Սակայն յոյս ունինք, որ երբ մեր  
ոյժերի չափ անենք, երբ հատարակութիւնը ինքը տեսնի,  
որ իրօք գործ կատարում է եւ այդ գործը միայն ու միայն  
մի նպատակ ունի՝ հայ ժողովրդի կուլտուրական յառաջա-  
ռիմութիւնը, ինքը օգնութեան կայ, ինքը կմուածէ մի-  
ջոցներ ու հնարաւորութիւն կտայ մեզ ուսումնասիրելու  
մեռ կեսնքը, հրասկարակ սերելու մեր հոգու ստեղծա-  
գործութիւնը, մեր այն ոյժը, որով ապրել ենք ոժոխքում  
անզամ եւ որի շնորհիւ պիտի ապրենք լաւագոյնը ստեղ-  
ծելու։

Հայ կեանքի ուսումնասիրութեամբ պարապողներին է  
մում առանց կանխակալ տրամադրութեան արձագանք  
տալ առաջադրած աշխատանքին. չկարծել թէ ամսագիրը  
այլ նպատակ ունի, քան հայ եկեղեցու եւ նրա հետ կա-  
պուած հայ ժողովրդի ինքնուրոյն զարգացումն է։ Ժողո-  
վրողին անկեղծ, սրտով օգնութեան զալու, մեր ազգային  
կեանքի վերաշխութիւնը անսասան, բուռն համոզմունքով  
իրեն անխախտ նպատակ ոնողը թող հաւատայ, որ մեր  
դառնութեան ուժակի մրուրը քամած այս ըոսէին մեզ  
ըոլորիս միայն ու միայն մեր ազգային մեծ շԷնքի վերաշի-  
նութեան միտքն է առաջնորդողը. եւ «Արարատ»-ը պարտք  
ունի այդ աշխատանքում կատարելու անկաշառ, անկեղծ  
աշխատանք, որի աշակցութեանն է հրաւիրում նա հայագի-  
տութեամբ պարապողներին։

Անվերջ աշխատանք կայ մեր առաջ. հսկայական գործ,  
ապագայ սերունդների առաջ ծանր պատասխանատութիւն  
եւ «Արարատ»-ը անդադրում աշխատանքի պահանջն է  
դնում նրանց առաջ, ում համար հայ ժողովրդի վերա-  
ծնութիւնը դատարկ խօսք չէ, թովքի վրայ գրելու նիւթ չէ.

այլ այնպիսի պահանջ, որին շրաւարարելը մահանալ, ոչնչանալ կնշանակէ:

Յանուն հայ ժողովրդի անլուր տառապանքի թող հեռանայ մեր միջից սառնութիւնը, թող շքանան այն բոլոր կանխակալ կարծիքները, որ միմեանց նկատմամբ ունինք այս ու այն պատճառից առաջ եկած։ Այժմ համազործակցութեան պահանջը ամենատեսակ տարրերութիւնների՝ լինի թէ աշխարհայեացքի, թէ անձնական վերաբերմունքի այս ու այն խնորի ըմբոնումից առաջ եկած, բարձրը պիտի լինի։

Սուանց համազործակցութեան, առանց այն կենդանի կապի, որը բոլորին անկեղծօրէն ոգեւորող մի սկզբունքից է առաջ գալիս, մենք շատ քիչ քան կանենք ու միշտ էլ մեր գործը կլինի թերի. միշտ էլ մեր կեանքը շուտումնասիրած, մեր իրականութիւնը ցաւերով լի, դեղագրերով հարուստ քայց առանց դեղերի, առանց սժշկութեան։

«Արարատ»-ը իւր կէս դարեան գոյութեան շէմքին իւր անկեղծ, յերաւի սրտի խորքից ողիսած, արին ու մարմին դարձրած հայ ժողովրդին անկաշառ ծառայելու հայ մարդու քարոյական-կրօնական մուաւոր յառաջադիմութեանը համոզմունքով, կուռ հաւատով ծառայելու համազործակցութեան կոշն է ուղղում։

Հաւատանք միմեանց հաւատանք, որ իրօք մեր բոլորին առաջնորդողը քազմաշարշար հայ ժողովրդի վերակենդանութեան սրբազան նպատակն է եւ աշխատենք, աշխատենք ու աշխատենք անտրտունջ, առանց մեծ պահանջի, առանց անձնական շահի։

Գիւտ արեղայ